

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ծր.
Տարեկան	6 "
Վեցամսեայ	3 "
Արսասահմանի համար տարեկան	15 "
Վեցամսեայ	8 "
Սակերիայի համար	3 շր.
Տարեկան	1.50 "
Վեցամսեայ	0.75 "

Դանուցանելու տողը առաջին երեսին համար 40 սխալ վերջին երեսին համար 20 սանթրիմ է. երեսին անցիկ անցումներու համար 20 0/0 զեղչ կը ըլլայ:

Վառնայի համար մի րոպէ 40 սանթրիմ

ՉԱՐՄԱՐՄ

ՄԱՐՏԻ ԱՉԳԱՅԻՆ ՔԱՂՈՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԵՐ ՀՐ ՏՄԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵՍԱԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ԵՐՆԱՐ

Նամակ և գրուի գրկելի նմարագրութեան հասցեիս.

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Արսասահմանի համար մեկ (20 ՍԱՆԹՐԻՄ) Պուշկարիոյ համար մեկ (15 ՍԱՆԹՐԻՄ)

Գրութիւնք եւ չեն տրուիր

«ՇԱՐՋՈՒՄ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՄՈՂՔ ԲԱԺԱՆԿԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

ՀԱՅ ԾՆՈՂԻՆ

Երբ քրնայող մանկիկիդ օրօրոցին քով աղբիւն:

Կիչերն ի բուն պահպանես հըրեշտակի մը պէս դուն.

Երբ մետաքսէ մազերը պահես ձոխս իր վրայ,

Եւ ծընողի արիւնքը երակներուդ մէջ ետայ:

Երբ ա՛յ արթուն՝ մայրական կուրծքին փարի նա ծրպտուն՝ Իր նայուածքը մըրիւնէն խորերը քու աչերուն,

Երբ ցաակոտէ, թռչնոյ ծունկերն րուդ վերայ նա,

Ու ք.ւ հոգիդ ցնծութեան լայն թեւերով վերանայ:

Յիչէ՛ որ հայ անօթի որբիկներ կան անտէրունչ,

Որ դեռ փոքրիկ տարիքնուն կը տառապին անմըտունչ՝ Սարսուղի շուքի պէս մութի մէջ ջնն սողալով:

Յիչէ՛ որ թուր, սեւալուրի այդ մանկունքը մերկ, մորթ կը պըտըտին ու կուլան սեւ մահն իրենց հօրն ու մօր:

Եւ ձեռներն անցորդին կը կարկանդակ զողալով:

Վ Է Տ Ա

Չէ՞ որ առանց ամպի անձրեւ չկայ: Չէ՞ որ առանց մահուան կեանք չըկայ:

Չէ՞ որ այդ որոտմնալիք ամպերը գոյացան և դեռ պիտի գոյանան ազատութեան սիրուն կուռօղներուն բնկցուցած վառօղի մութիւնէն. այդ կենարար անձրեւին կայլակները կը կաղմուին հայրենանուէր կոխին մէջ ինկած հերոսներու արեան գոլորշիներէն:

Եւ այժմ մեր թշուառ Հայաստանին հարազատ քրոջ գլխուն վերեւ փայլատակող այդ յոյսի բոցերէն խանգավառ՝ կը հարցնես դուն.

— Արդեօք մերիններն ալ բան մը պիտի ընեն: »

Սակայն սկանչ գի՛ր, լսէ՛ քու հոգիդ խորերէն ելած ձայնին— քու խղճիդ ձայնին.

— Ո՛վ դուն հայրենաւէր հայ, ո՛վ դուն, որ անձկանօք կըրպասես Հայաստանի հորիզոնին վրայ ալ անձրեւեր ամպերու կուռակատեւուն, փրկութեան շանթերու փայլատակելուն, ազատութեան յոյսի շողալուն, «դուն բան մը ըրի՛ր մինչեւ հիմայ»:

յառաջանալ նիւթին կոթնած միայն:

Ամէն մէկը թող իր գերը կատարէ ուրեմն:

Գաղափարի հայը արգէն շատոնց դրած է իր արիւնն ու միւսը հայրենիքի փրկութեան սեղանին վրայ: Թող նիւթի հայն ալ բերէ իր ուժը:

Թող գաղափարականին պէս հարուստ ալ համոզուի թէ չկայ փրկութիւն առանց զոհողութեան:

Այսօր Հայաստան մը կը հեծէ իր շղթաներուն ծանրութեանը տակ. այսօր անիկայ հայութեան գերեզմանը ըլլալու վտանգին տակ կը գտնուի նոյն իսկ, որովհետեւ երէկ բաղձացինք միայն առանց զոհուելու: Վա՛յ մեզ եթէ այսօր ալ շարունակենք չըլնել, եթէ վաղը այլիս չըլլա՛յ Հայաստան, չըլլա՛յ հայութիւն:

Ա՛յ ո՛ր օրուան համար պիտի պահեն մեր հարուստներն իրենց ոսկին, եթէ ազգը գոյութեան կուրծքի վրայ մղէ այսօր, եթէ իրենց երկաթէ արկղերու մէջ բանտարկած մետաղը պիտի կրնայ նախախնամութիւնը ըլլալ ամբողջ ազգի մը վերածնութեան:

Մեր հայրենիքը մահուան ճիւղաններէն խլելու համար կուռօղ, անձնազոյ՛ յեղափոխական մերկ կուրծքը միայն անկարող է ետ դարձնել բռնութեան պատնէշէն արձակուած անբիշ ռուսները:

Նիւթ տուէք անոր, որ յաջողի իրեն համար կուռան մը հաստատել:

Չէ՛նք տուէք անոր, վառօղ լեցուցէք իր ափերուն մէջ, որ կարենայ այրել թշնամիին պատնէշները:

Յեղափոխութիւնը, այո՛, պիտի հասնի իր նպատակին, եթէ իր գաղափարին միանայ ուժը: Անիկայ հայրենիքի ազատութեան ճեպընթացն է: Պիտի խոյանայ առաջ, ընդվզումի խորտ սրացքով, եթէ ունենայ իր մէջ շարժումին երկու անհրաժեշտ տարրերը— կրակը և ջուրը:

Մտեցէ՛ք և նայեցէ՛ք հայկական յեղափոխութեան մեքենա-

ին մէջ. բորբոքած է հօն բոցավառ կրակ մը՝ որ գաղափարն է: Նայեցէ՛ք կաթսային մէջն ալ. ափսո՛ս, դատարկ է ան. կը պակասի հօն շուրը սր դրամն է:

Ձուր տուէ՛ք մեքենային, թող հեղեղներ վազեն անոր մէջ. Ուժ տուէ՛ք գաղափարին, որ սլանա՛յ առաջ՝ իր դէմ հանուած արգելքները ճզմելէն, իր անիւներուն նետուած քարերը վշրելէն.....

Վ.—ՏԱ

ՀնՁԱԿԵԱՆ ԱԳԻՏԱՆՈՐՆԵՐ

Կիրակի օր տրուած յայտարարութեան համաձայն Յէնթրալի սրահին մէջ խօսեցան Պ. Խուչպուլեան և Չիթճեան. սրահը լեցուած էր բազմութիւնով: Ինչչեւ իսկ տիկիններն ալ իրենց պատշաճ անցը գրաւած էին, ազգ. վերածնութեան գործին ռահվիրաները հանդիսանալ յաւակնող այս գործիչները ունկնդրելու համար. ժողովուրդը կուզար անգամ մըն ալ հաստատելու թէ ինքը կը յարգէ միւնչեւ իսկ ու է կուսակցութեան իբր դաւադիր, խաչաքող արտաքսուողները և կուզէ անոնց բերնէն քանի մը մխիթարական խօսքեր լսել սփոփուելու համար. և մենք տեսանք թէ ատոր բոլորովին հակառակը եղաւ. շատ տխուր ապաւորութիւն թողուց մեր վրայ Չիթճեանի բանախօսութիւնը. թէեւ Պ. Խուչպուլեան իբրեւ յեղափոխական ոյի կրող մէկը ներկայացաւ մեզի և այդպէս մնաց մինչեւ վերջը սակայն մենք կը կասկած ինքի բերն անկեղծութեանը վրայ և կը հարցնենք իրեն թէ, ինքն ալ համակիր էր Չիթճեանի խօսածներուն և մէջ բերած փաստերուն՝ հնչակեան կուսակցութեան մանաւանդ նաղարբէկեանցի համար և պատուելին յեղափոխական համոզումին նկատմամբ:

Չիթճեան խօսելով ընդհ.

ԳԱՂԱՓԱՐԸ ԵՒ ՈՒԺԸ

— «Իրդեօք մերիններն ալ բան մը պիտի ընեն»:

Աստուծոյ Պալքաններուն վրայ սեւ սեւ ամպեր կը սաւառնին. ամպեր, որոնք յլի են շանթերով ալ. զովացուցիչ անձրեւի շիթերով ալ: Ամպեր, որոնց ծոցին մէջ իրարու փաթտուած են կեանքն ու մահը:

Արդեօք անոնք շանթեր պիտի բարձակեն թէ պիտի իջնայ անոնցմէ փրկարար ցօղ մը բռնութեան խորշակէն խանձուած, թշուառութեան սարսուռէն ճաթնատած երկրին վրայ:

Արդեօք մահ պիտի բերեն անոնք թէ կեանք:

— Երկուքն ալ:

Մեր կուրծքը ազատութեան կըռուին է. արգարութեան կուրծք: Եւ մեր իտեալը— հաւասարութիւն:

Սակայն դժբախտաբար աշխարհին օրէնքները, մեր սպարած միջավայրը, մեր կեանքին պայմանները թոյլ չպիտի տան որ մենք մեր գաղափարական կռիւն ուղիէն քաշենք մինչեւ ծայրը առանց նիւթականի աջակցութեան:

Ուղղակի նպատակին գիմելու համար պէտք ունինք վրասմ գաղափարին ալ, կուպիտ ուժին ալ:

Գեռ փոխուած չէ հին աշխարհը:

Գեռ ազատութեան սերմը պիտի կրնայ արգասաւորիլ՝ ուժին արգասիքին մէջը միայն:

Գեռ գաղափարը պիտի կրնայ

կան յեղափոխութեան մեքենա-

ղափոխական գործի վրայ մասնաորեն խօսքը հայկական յեղափոխութեան վրայ և ուղեց քննադատել թէ հայկական յեղափոխութիւնը ժամանակին էր սկսած թէ վաղահաս էր. իր ըրած ճամբորդութիւններէն կրած տպաւորութիւնները վերջիջեցով, ինք այն եղբակցութեան եկաւ թէ, հայկական յեղափոխութիւնը արդէն ծնունդ կառնէր կամաց կամաց հայաստանի Ամէն քաքաք ու գիւղերու մէջ, որովհետեւ ժողովուրդը տակաւ առ տակաւ նիւթապէս իյնալու վրայ էր. և վերջապէս պատուելին երկար խօսելով այդ վերածնութեան համար ինք ընդունեցաւ թէ հայկական յեղափոխութիւնը բնական պահանջն էր հայ ազգին արգար զայրոյթն էր հայ գիւղացիին, զինքը չըջապատող թուրք ե. քուրտ խուժանին կողմէ կրած զրկանքներուն դէմ. ու այս տրամաբանութեան վրայ ընդունելով միամիտ ունկնդիրներուն ծափահարութիւնը, անիկայ թելը կորսնցուց և մտաւ կուսակցական խնդիրներու մէջ, և սկսաւ ալ ու ձախ ցելեր նետել ու մասնաւորապէս սարսափելի քննադատութեան ենթարկեց հնչակեան կուսակցութեան գործունէութիւնը և մասնաւորապէս նազարէկեանցի կեդրոնը. և կատարուած բոլոր ցոյցերը և ժողովրդական հերոսութիւնները իբրեւ արուեստական նախապատրաստութիւններ ներկայացուց ունկնդիրներուն, դժուար էր որոշել պատուելին բռնած դիրքը. անիկա նախ և

առաջ կը դրուատէր հոյ յեղափոխութիւնը իբրեւ բնական ծնունդ և յետոյ զայն իբրեւ արուեստական շարժում մը կը ներկայացնէր. արգեօք որուն վրայ կարելի էր որոշ համոզում գոյացնել. պատուելին որ օր մը առաջ կը գործարք մի վրայ կարմիր յեղափոխական բողոքողի ամենաբուն թափով մը, կարծես իր ձայնը լսելի ընելու համար Սասունի սարերու մէջ կուուղ քաջերուն, և այսօր վատասիրտ էր անիկա և կուարարտասուքներ կը թափէր հայ յեղափոխութեան վրայ. 96ի հնչակեան պառակտումը բնական ընդունեցաւ ինքը յայտարարելով թէ պէտք էր որ մաքրագործումը մտնէր կուսակցութեան մէջ և սխալները պարմանուէին ու հիմնուէր այդպիսի փուսակցութիւն մը որ արեւի պէս բաց ըլլար և ժողովրդի վատահոլութիւնը վայելող լաւ տարրեր ունենար իր մէջը. որպէսզի յեղափոխական գործը չվտանգուէր ու շարունակուէր. ասոնք լաւ. հիմա կը հարցնենք թէ ինչու համար վեր. հնչակեան կուսակցութիւնը չկրցաւ իր գոյութիւնը պահպանել և ինչու ամենախայտառակ զբոլորեան մէջ որուն նմանը մենք չէինք կրնար երեւակայել. չէ՞ որ ինքը և իր նմանները այսինքն բողոքողներու խումբը կը կազմէր վեր. հնչակեանութիւնը հիմնողները. ի՞նչ գործունէութիւն կրցան ցոյց տալ ժողովրդին վեց տարիներու շրջանին մէջ. ոչ ինչ. ուրեմն, ուրեմն ի՞նչն էր պատճառը. պատճառը այն էր

որ պատուելին և իր նմանները յեղափոխականներ չէին և չէին ալ կրնար ըլլալ. ու պատուելին շատ լաւ պիտի ընէր որ թողոյ՞ յեղափոխութեան պաշտպանութեամբ բարոսներու և անհաւատներու մէջ աւետարանը քարոզել շարունակէր, որովհետեւ իրմէ գերազանցապէս շատ բարձր էր յեղափոխական գաղափարը և սոցիոլոգիական ընդունակութիւնը. բոլորովին ծաղրելի կը գտնենք զինքը այսպիսի խնդիրներու մէջ մասնակցելու անկենդան համար. մանաւանդ հնչ. կուսակցութեան օրկանին մէջ իրեն և իր ընկերներուն վրայ գրուածները բացարձակ ստույգութիւններ և զրպարտութիւններ ներկայացուց ժողովրդին. յայտարարելով թէ անոնք ծնունդ առած էին անհնական հակառակութիւններ և ուղղութիւններու ու համոզումներու բացարձակապէս տարբեր ըմբռումներէ. Պատուելին շոշափելով ժողովրդի թոյլ կողմերը ազիբական ձեւով մը հարցուց ժողովրդին թէ հայ ազգը կրնա՞ր իր մէջէն գործ տալ այդպիսի հրէշներ որոնք ընդունակ ըլլան խաչագողութիւն ընել, դաւաճանութիւն ընել և այլն հայլն. շատ ծիծաղելի էք պատուելի. մեր մէջ երեւան եկած դաւաճանները, խաչագողները չինացիներ էին, պատուելի, ժողովրդի առջեւ ի զուր մի աշխատիք գործ ձեզի արդարացնել առ ոչինչ համարելով 20000 տարի խնդիրը և դաւաճարական փաստերու գոյութիւնը, որովհետեւ ձեզի ամբաստանողը վաւանայի ժողովուրդը չէ, ալ

գիտէ՞ք ու՞. ձեր երբեմն պաշտած և տալու զուրաններով փառաբանած հնչ. երկու հատուածներու ընտրութեամբ ստեղծուած կեդրոնական վարչութիւնը. ու անհաւատիկ հոն, հոն միայն կրնար գործ ձեզի արդարացնել. շատ գեղեցիկ կերպով ընդունեցաք այդ թէ ժողովուրդը պէտք էր որ երկու կողմերն ալ ունկնդրէր ու այդպէս իր որոշումը տար. հայս քրիստոսապատիւ պատուելի, ինչու համար չկրցաք ներել հին հնչակեան ընկերի մը որպէս զի ձեր բանախօսութեան վերջը անիկա ալ քանի մը խօսք ընէր. կը կարծէք թէ ձեր խօսածները իբր պատգամներ ընդունելու գոտապարտուած էր ժողովուրդը. ոչ, ոչ պատուելի այդպէս չէ. քիչ մըն ալ պէտք է ներգաժախտ գտնուէր որպէսզի այդ ընկերիդ ալ քանի մը խօսք ընէր քանի որ ձեզի ամբաստանողներու հասցէին «արիւնհերոս» մակդիրը ուղղուեցաւ, դուք ձեզի արդարացնել ճգնաժամ տներ նիդ, ժողովրդի կողմէն բարձրաձայն.

Ու կարծեմ իրաւունք ունինք կասկածելու Պ. Խուչպուլեանի անկեղծութեանը վրայ. կը կրկնենք մեր հարցումը թէ ինքը համամիտ էր Զիթճեանի բոլոր խօսածներուն:

ՆԱԽԱՆԻ ԳԵՐՄԱՆԻԱԿԻՆ

Գերմանական պատգամաւորական ժողովը անգամ մը ևս հաստատեց իր շրջաններու մէջ տիրող փղտացիական վերաբերմունքը Արևելեան խնդրոյ նկատմամբ ընդհանրապէս, և հայկականին մասնաւորապէս:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՎԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԱԽԱՆԴՈՒԹԻՒՆԸ

«Մշակոյի մէջ հարց էր բարձրացած մայրենի լեզուի դասաւանդութեան մասին. ժողովրդական տարրական դպրոցի առաջին տարւոյն մէջ գուււստաբարսոնով սկսել, թէ գրական լեզուն»:

Անշուշտ ինչպէս մայրենի լեզուի դասաւանդութեան նոյնպէս ալ թըւարանութեան, բնական գիտութեանց եւ թէ ուրիշ ճիւղերու մէջ պէտք է երախաներուն հասկնալի դառնալու համար փոքրիկներուն լեզուով խօսիլ, այսինքն գաւառաբարսոնով, եւ, ինչպէս մանկավարժութեան մէջ ընդունուած բան է— ժողովուրդը տարրական դպրոցի մէջ շարունակել այսպէս ամբողջ առաջին տարին, Բ. տարին արդէն գրական լեզուն բացարձակօրէն իյնող պէտք է զուտայ ամէն տեղ, թէ խօսակցութեանց եւ թէ գասաւանդութեանց մէջ:

Բայց ինչպէս կազմել առաջին տարւոյ համար այրբենարանը: Այս

հարցումին պատասխան ստանալու համար պէտք է տալ ուրիշ մի հարց. ինչ է այրբենարանին, այսինքն մայրենի լեզուի դասաւանդութեան նպատակը: Մայրենի լեզուի դասաւանդութեան առաջին եւ զիջաւոր նպատակն է իմ' ուղիւն ծանրացնել մեր երախաներուն հայ գրական լեզուն, որը մայրենի լեզուն է սովորողը հայրը»:

Այս նպատակին հասնելու ունի ոչ միայն ազգային, այլ և բարոյական տեսակետով նշանակութիւն: մեր գաւակները ոչ միայն ճանչնալու եւ և հաւատարիմ սիրով սիրելու են հայ լեզուի քաղցրութիւնը. մեծութիւնը, այլեւ համահայկական գրական լեզուի միջոցով անոնք լեցուելու են հայի զգացումով, սովորելու են խորհիլ, ազրիլ ու գործել հայի պէս հայի հոգով: Այս գեղեցիկ նպատակին հասնելու համար կարժէ թափել ամէն ջանք եւ աշխատանք, առաջին ծնողաց. երկրորդ վարժապետին և աշակերտին կողմէ: Գաւառաբարսոնով պատրաստուած այրբենարանը կարող է ծառայել մայրենի լեզուի դասաւանդութեան այս նպատակին: Ո՛չ ուրեմն այդպէս այրբենարան կազմելը աննպատակայարմար է և անպէտք:

նպատակէն առաջ կայ ուրիշ մի դպրոցական գլխաւոր նպատակ, այն է առաջին անգամ երախան լեզուն բանալ, լսել, խօսիլ զիջ' սովորեցնել, Բայց ճիշդ այս եւ այսօրինակ նկատումներով է. որ ամբողջ առաջին տարին դպրոցին մէջ անխտր գաւառաբարսոնով կը դասախօսուի: Ասկէ զատ երախան լեզուն մասամբ արդէն բացուած է մանկապարտէզին եւ ընտանիքին մէջ: Եթէ վարժապետը հարկաւոր տեսնէ, կարող է 1-2 ամիս նուիրել միայն այդ նպատակին, որը սակայն կը կատարուի առանց գրքի:

Հայա ինչպէ՞ս կազմել ժողովրդ. տարրական ընթացքի առաջին դասարանին համար միւս գիրքերը: Արդէն այս աստիճանին մէջ շատ ուրիշ գիրքերու պէտք չկայ, որովհետեւ հոս երախան հէքիաթներու եւ անմիջական դիտողութեան ու իրազննութեան միջոցաւ է, որ պիտի սորվի հայրենագիտութիւն, թուրաւութիւն, բուսաբանութիւն եւն. եւ անտարախոյս հէքիաթները կը պատմուին տեղական, այսինքն մանկան խօսած բարբառով: Նոյն իսկ եթէ ուզենք այդ աստիճանին համար մար գիրք կազմել, զօ. թուրաւութիւն, դարձեալ ներքի չէ գաւառաբարսոնով գրել այդ, որովհետեւ

նախկինդրական զրոյթեալը կրնցէնտրացիոնասիտէ՞ պէտք է. որ տարբեր առարկաներ իրար օժանդակեն, մասնաւոր մայրենի լեզուի մէջ, և ոչ թէ մէկին շինածը միւսը քանդէ:

Արտաքին ամէն ապարտութենէ ու երե ոյթներէ այնքան չուսով շարժուող երախանի մտքին մէջ խառն սպիտութիւն կը ծագի, երբ այրբենարանի մէջ նազրական լեզուով, իսկ թուրաւութեան գրքովի մէջ գաւառաբարսոնով կարդայ: Այս պարագային փոխանակ համակեդրոնացման տեղի կունենայ ապակեդրոնացում, ինչ որ հակառակ է մանկավարժական ամէն սկզբունքի: Ամէն գասախօսութիւն լինելու է մի եւ նոյն ժամանակ նստել մայրենի լեզուի դասաւանդութիւն:

Նկատողութեան արժանի մի կէտ ալ կայ երախանի ստացած առաջին սպաւորութիւնը շատ հաստատուն է, շատ մնայուն ժ. Տ. դպրոցի մը զբոլոր իր կանգնող վարժապետը պէտք է լինի հոգեբան եւ գիտնայ օգտուի մանկական հոգու ունեցած ամէն առաւելութիւններէն: Ուստի մայրենի լեզուի դասաւանդութեան մէջ ալ առաջին սպաւորութիւնը կուտանք գրական լեզուով, որ աւելի հաստատուն է, որ աւելի մնայուն լինի:

Պատգամաւոր Պէրնշթայն (ընկերով) մտաւ Յոսի Կիւրի մէջ երկարօրէն խօսեցաւ Մակեդոնիոյ, Հայաստանի և Բուսնիոյ հրէաներու խնդրոյն վրայ: Հայկական հարցը այնօրինակ չեղաւ մը պարզաբանեց, որ յատուկ է անոր հետ ծանօթացող, անոր արդարութեան և օրինաւորութեան համոզող անձերուն: Պիւլիովին ուղղակի հարցոց թէ պարտք չհամարի՞ր Պէրնշթայնի դաշնագրին գործադրութիւնը թելադրել: Պիւլիովին յետազգեց իր պատասխանը: Նախօրը օրը արդէն հաւանութիւն տուած էր Աւստրիոյ և Ռուսիոյ կողմէն առաջարկուած բարենորոգման ծրարքին և յայտարարած թէ Գերմանիան Արեւելքի մէջ գործնական քաղաքականութիւն չը մղեր: Իսկ հիմա, դուք էլ խորհելով որ վերոյիշեալ հարցերը միջազգային քաղաքականութեան ամենաշօշուօար կէտերը կը կազմեն, խոհեմութիւն համարեց լուր և կամ ուրիշ շարժումի մը ունէր թեքելու:

Միւս պատգամաւորները չպաշտպանեցին Պէրնշթայնի խօսքերը և այսպէսով վիճարանական արծարծում մը տեղի չունեցաւ, բան մը որ կըսպասուէր արդէն: Կըստասուէր կըսեմ, որովհետեւ ներկայ թայիսթակի մէջ կառավարութեան նեցուկները գերակշիռ ուժ ունին և հարցապնդումէ մը ու է հետեւանք կարելի չէ յուսալ:

Ահա ամփոփումը Պէրնշթայնի խօսածին. «... Մակեդոնիոյ բարենորոգման ծրարքը Պիւլիովին կողմէն հաւանութիւն գտած է: Ես այն կարծիքը չունիմ, թէ այս լուծումը մասնաւորապէս բարեբանաբար է: Եթէ իրագործուէր, լաւ է, բայց ճիշդ հոտ է գծաւարութիւնը: Հարկային տնտեսութիւնը թուրքիոյ մէջ ամենավատերէն է, հարկային ճնշումը անազնի, գրեթէ անկի վատ է անապահովութիւնը, որ հետեւանքն է հարկերու բարձրութեան: Անոնք անկանոն կիրառով կը բարձրացուին և այս անապահովութիւնը կանգամաւորօժէ գործի

վերաբերեալ ամէն ձեռնարկներ երկրամասեր, որոնք դրախտներ կրնային ըլլալ, անպատ կը դառնան: Թիւրք կառավարութիւնը կրնայ ամենալաւ դիտումներ ունենալ, բայց տոնայ սեղանի երկարակամ քօնթրօլի բարենորոգման մասին խօսք անգամ չկրնար ըլլալ: Եթէ թիւրք կառավարութեան բարի կամքը երթողքի ռոգեմ, հարկադրուած եմ աւելի ևս կասկածիլ, որ թուրքիան սեփականութեամբ ըստ իր արեւելեան կրնայ մտնել: Ազգերու խառնակութիւնը, գործադրեան կը ներկայացուցէ: Սուրբութեանը, անկարող կրնէ առանց չար կամքի պէտք ունենալ: Ասոր ճարտարական քօնթրօլն է միայն: Անխուսափելի պիտի ըլլայ, որ Եւրոպան ժակեդոնական խնդրով զբաղուի: Կառավարութիւնը պէտք չէ կրկնապար միջոցներով գոհնայ: այս ճամբով հիմնական բարենորոգումներ չէ կարելի գործադրել: Պէրնշթայնի դաշնագրով թիւրքերուն վրայ պարտք դրուած էր, առանց ժամանակի կորուստի, հայերուն վիճակը պատշաճ կերպով կարգադրել:

Թուրքիան բան մը չըրաւ թէ երկրին անգամներ յիշեցուցին իր պարտքը իրեն: Հայերը եւրոպայէն յեղաշրջում չեն պահանջեր, թուրքիան բաժնուիլ չեն փափաքիր: Տասնեակ տարիներով անկախ Հայաստանի մը վրայ չէ կարելի մտածել: Նոյն իսկ երկրային ինքնիշխանութիւն չեն պահանջեր հայերը, միայն նահանգներու և գաւառներու ինքնօրինակութեան, համապատասխան ապահովութիւն հարկային ճնշումներու և ընդունեցող ղէմ: Վարչակարան այս բարենորոգման համար ներկայ ակնթաղութիւնը ամենին յարմարն է: Եթէ առիթը փախցուի, կրնայ առաջ գալ վիճակ մը, որ ամբողջ Եւրոպան ծածկէ անկէքով: Անգղիա և Ֆրանսա բարենորոգման այսօրինակ քայլի մը շատ հակամէտ են, բայց անոնք ուս և և գերման կառավարութեան զիմարութեան հանդիպած են: Ինչ չա՛

կրնայ ունենալ Գերման կառավարութիւնը այս բարենորոգման հակառակելու մէջ: Անգիրը սեփականութեան ցնցումի կամթուրքիոյ սպառնացող վտանգի մը վրայ չէ... Կարող էր Բուսնիոյ հրէաներուն, Պէրնշթայն իր խօսքը կը վերջացնէ հետեւեալով: «... Եւրոպա բոլոր այս անիրաւութիւնները խաղաղ սրտով կը դիտէ, փոխանակ միտնալու և խոստումի գործադրութիւնը ստիպելու: Կը պահանջեմ որ Եւրոպան իր քարտեզը կը գործնէ: Չեմքը ուժով սեղանին վրայ կը գործնէ: Միայնալ նահանգներու նախագահը արդէն ձայն բարձրացուց: Բայնաքանցելիին Պիւլիովին կը հարցնեմ, թէ որոշուած է այս քայլին միտնալու և Պէրնշթայնի դաշնագրի գործադրութիւնը ստիպելու:

ԳԱՒԱՌԱՅԻ

ՀՐԱՊԱՐԱԿԻ ԶԱՆՃԵՐԸ

Ճանճեր կան որ երբեմն երեւան գալով, այնպիսի ազեղ ու տաղտկալի բզզիւններ կընեն, որ մարդ նոյն իսկ կը գարշի անոնց հետ գործ ունենալու: ու այս աւելի ձանձրալի կը դառնայ երբ աւելիս մեղհիւնը կը բզզան զրական կրկեսին վրայ: որ կուպան կ'յնան հոն, սիրտ պղտորելու, զգուանք ազգելու անյազ տենչով մը խեղալով: Ու գարմանքով սեսայ թէ ձանճերու այս խելագար խաժամութէն հատ մ'ալ իմ վրաս բզզալ սկսած է, հերքում պահանջելով մէկ յօգուածիս մէջ գրուած այն միջանի նախկաններուն որոնք երեւցած էին: «Շարժումի սիւնակներուն մէջ, ապէ՛ գրեթէ մէկուկէս երկու ամիս առաջ: Շիտակը, նոյն իսկ չէր արժէր հերքում անուր աւալով նկատողութեան առնել այդ, եթէ երբէք զոյսութիւն չունենար երրորդ մը, որուն մասին մասնաւորապէս գրուած էր սմէն ինչ, և գուցէ մեր այդ ը-

ուութիւնը տարակուսանքի առիթ մը տար ընթերցողաց: Ահա թէ ի՞նչ է իրողութիւնը: Պարոնիկի մը հաճոյ չէ թուած այն անականները, որ այդ խնդրին առթիւ իր անունը յիշած պահերնուս շնորհած էինք իրեն, իր նկարագիրն ու հոգին պարզող երկու յարմար որակիչներ, զորս խիստ կծու գտնելով, ստիպած է զինքը փութկուս հապճեպով մը հրապարակ նետուել ու այս անգամ ալ իր մտային տկարութիւնը ցոյց տալ:

Մարդ դժուարաւ կրնայ իր ծիծաղը և միանգամայն գարշանքը զսպել, հրը կը տեսնէ Սոգրիկեանի նման անձ մը, որ «քիչ մը նախանձախնդիր իր պատւոյն» (II) հերքում կը պահանջէ ատոնց: Լաւ ուրեմն, տեսնենք թէ ո՞ր և ի՞նչ է Սոգրիկեանի պատիւը:

Մենք, մեր անոր դաւազողութիւն մը լողուածին մէջ չեղանելով այն բոլոր աղտոտ դաւերը և ինկարգները, զորս շարք մը Սոգրիկեանի նման անզուգական ապուշներ, ազգային գործ մը ընկելու տենչով, սկսած էին թուամեանի հին որբերուն գէմ լորել, որպէսզի այդ անհաւասար խաչագողը յաջողի իր նախկին շահատակութիւնները յառաջ տանիլ, յիշելով Լօստոնի Միաց. բնկ. վարիչներու ցատագար խմբակին կողմէ եղած ժողովը, ըսած էինք թէ հոն փախուստ սուրբ երկու հոգի, որովհետեւ հոն հարկաւոր էր տղոց հետ դէմ տո գէմ խօսիլ ու վիճիլ:

Միթէ իրաւունք չունինք բարոյականէ զուրկ նկատել անձ մը, որ տղոց մտեցած պահուն թուամեանը նախատելու համար ամէն տեսակ անտիպ լուսանքներ տեղալէ վերջ անոր հասցէին, ելլելով թուամեանի առջեւ լիբր ու իրեն յատուկ զանազան ածականներով կորակէ զանոնք: ու կը կրկնենք, մարդ որքան բարոյական զգացում ունենալու է որ, տեղ մը թուամեանը Լօստոնի էն մեծ խաչագողը նկատելէ յետոյ, յայտարարէ անոր մեծ ազգասէր մը և որբախնամ

Արդէն մի առաւելութիւն է հէնց առաջին անգամ երախայի մէջ տպաւորել այն միտքը, թէ գրքերու մէջ տանը կամ փողոցի լեզուով չի գրուիր, այլ մի ուրիշ հայերէնով, որ աւելի բարձր է, աւելի մաքուր քան առաջինը: Երախան գուրադարձող արդէն զիտէ, իր գրիտցած այդ բարբառով գիրք կազմելով մենք անոր նոր բան մը սորվեցուցած չպիտի ըլլանք: Մինչդեռ մայրենի լեզուի և անոր շուրջը համակեզրոնացած առարկաներու գոսաւանդութեան նը. պատակն է նոր բան մը սորվեցնել: Մենք մեր ու թուրքական սանիկէն երբէք չենք պահանջեր և իր այլբենարանին մէջ երբէք չենք գրեր անոր կարողութեան և հակադրութեան: Դա դատապարտելի է: Բայց բարեբանաբար ամէն լեզուի մէջ ալ կան մտնկանց հոմար պիւրաւատչելի գրական բառեր, Օրիւնակի համար, ըսենք թէ «Ք» գիրը պիտի սորվեցնենք երախային: Միւս եւնոյն է՛լ վրայ գրուած է մի փոքրիկ աղկալ պատկեր, որու տակ գրուած է «քոյր» բառը, որը ընդունինք թէ սանիկը իր լեզուով «քիւր» կանուանէ: Առաջուց արդէն ծանօթ գրերով, ըսենք թէ մի նախադասութիւն կազմուած է, գ. օ. «Գայ-

ինանէ իմ քոյրս է» — Ահա գրական լեզուով բառեր և նախադասութիւն մը: որը իր աշակերտին ըմբռնել տալու համար դժուարութիւն չպիտի քաշէ ամէն մի մանկավարժ, նոյն իսկ ամէն թերուս ուսուցիչ: Ես կը զբժոնարիմ հաւատալ, թէ երախան յիշուած նախադասութիւնը հակակալէ վերջ այսպէս հարց տայ. «հայալքի՞ր հայնակ չէ, կամ «պատուհանը բաց է» նախադասութիւնը ըմբռնել վերջ հայալքի ինչի՞նչ հայնակ չէ»:

Կրնելով Գերմանական վարժապետանոցի վերջի շրջանին մէջ, փորձի-գրողը դաս կաւանդեմ: Երախաները բոլորն ալ իրենց գաւառաբարբառով զպրոց կուզան, ան ալ ի՞նչ ապաւորուած լեզու: Անշուշտ ուշադրութիւն կուտամ, որ գրական լեզուով նախադասութիւնները ճիշդ արտասանուին և այդպիսի նախադասութեան մը մէջ գաւառաբարբառ խօսք չգտնուի, երբ պատահի կը սրբագրուի, Բայց երբէք չէ պատահած, որ երախայ մը այսպէս հարց տայ. «հայա սա գերմաներէն չէ»:

հայա փենջարէ հայնակ չէ» ընդունինք թէ տրուեցան այսպիսի հարցեր, միթէ ատոնք չպիտի պատահին: Ես որոնք մէջ, ուր մենք ստիպուած ենք գրական լեզու ներմուծել: Ի՞նչ պիտի պատասխանէինք

այն ատեն. — «քիւր ալ հայնակ է, բայց լաւ հայնակ չէ, իսկ հանգարտ խղճով կարող էինք ըսել «փենջարէ հայնակ չէ» — Արեւին նոյն պատասխանը մենք կուտանք մի տարի առաջ:

Այո՛, կարող են պատահիլ նաեւ անհակնալի բառեր, գ. օ. «կաքաւը թաւ», սրտորդը ածապարբց» Երախան չի հաղկար «կաքաւ» և «աճապարեց» բառերը: Առաջին պարագային գործը ճիշդ է, կը ցուցնենք և զիտել կուտանք զուտեալ կամ կենդանի կաքաւ մը (կամ հակառակ պարագային պատկերը), երկրորդ պարագային չենք գիտեր երբէք թագստողական վերջին, դա ձանձրացուցիչ է և անպէտք ձառախուսութիւն «աճապարեց» բառին վրայ: Հաջ պատասխանի գրութեամբ աշակերտին կը ձանթագնենք այդ բառը:

- Ո՞վ աճապարեց.
- Որսորդը աճապարեց.
- Ինչո՞ւ.
- Որովհետեւ որսը փախելու վրայ էր.
- Արեւին ի՞նչ ըսել է աճապարեց.
- Շուտ շուտ երթալ, վազել
- Անգամ մըն ալ կրկնէ, որսորդը ի՞նչ ըրաւ.

— Որսորդը աճապարեց.

Այս խօսակցութիւնը կը կատարուի գաւառաբարբառով: Եւ այսպէս ահա առաջին տարիէն սկսելով կրնաքանակի դիտելից զժուար, ծանօթիւն անծանօթ, պարզեմ բուրաշխալ:

Միթէ արտագուր Գրեյ կարդալու դրոյսներ վերջերս լոյս ընծաւած Գերմանական-ընթերցարանը բողովին համաձայն է մեր հոս յայտնած փառքերու հետ:

Ինչ գրել-կարդալու գրութիւն: Որեմն գրելը կարգալէն առաջ կուգայ, այդ անկարելի բան է, կարգալ սորվելէն գոնէ երկու տարի վերջը սկսելու է գրելը... գրելը կարգալէն առաջ, այդ անկարելի բան է: Ձարմանալու տեղը չկայ խեղճ հայ վարժապետ: Փոտած, բորոտնած ինքնին կը յաջողէ մտրը իր վրայ գոյններով, կենսունակ և բարենորոգիչ կարողութեամբ: Այո՛, երախան գիրը ձանջնալէ առաջ պէտք է սորվի ուղիղ և կոր գիծեր քաշել, իսկ այդ գիծերը նպատակաշարմար կերպով միացնելով նա ինքը կըստեղծէ գիրը. բայց դառնանք բուն հարցին:

Մարգարեանի (Շարունակելի)

մը ըլլալը համաձայնելով գրել էլ- միտքին թէ, Թուականի հաստա- տու թիւը բարեփոխական մեծ ձեռ- նարկ մը ըլլալով, կրնայ ազգային մեծ օգուտներ հասցնել: Ու դեռ այս ոլորտներն է, սակայն, որ կելի ու «պատու» խօսք կընէ (°°°) խեղճ արարած...

Գուցէ մեր է՛ն մեծ սխալներէն մէ- կը եղաւ որ այդ դաւին մասնակ- ցողներէն բոլորը չը կրցանք յակահէ յանուանէ յիշել, որպէսզի կարենային ինքզինքնին քիչ մը գոյել: Բայց քա- նի որ այդ խաղերը շատոնց ջուրը ին- կիւստ և սարքողներուն նման ոչնչու- թեան ենթարկուած է, (քան մը որ անսպասելի չէր արդէն) յիշենք թէ այսօր այդ բոլորն ալ վտարուած են և զուրկ վարչութեան անդամ էր ըլ- լալէ, որուն մէջ էր և Սուգիկեան փառատնչիկ աշխատեցողը, որ փա- մանակէ մը ի վեր անոր Տօն-Քրիշո- կան «նախանձելի» պարծանքը կը վա- յելէր:

Կարծեմ այսօրանը բուսական է իր պատիւին վեհանձնութիւնը ցուցնու- լու համար, քանի որ ինք այդ մասին բառ մը իսկ յիշելու ինձմէ պատիւ պահանջած էր:

Բայց թէ ինչո՞ւ կը փափաքի Մե- նաւորի իսկական անունը հասկնալ, այդ գաղափարին յղացումը իսկ ապ- չեցուցիչ կերպով մեզ, Ու արդէն ա- տանկ բաներ միայն կրնան Սուգիկ- եանի նման յանդուգն խելիւնախոս- ները յղանալ և արտայայտել: Թող չը կարծի թէ Մենաւորը պատերու մութ ստուերին տակ նստող և բամ- բասանքներ հիւսող մըն է, եթէ ինք չը ճանչնար մեզ, շատեր արդէն ծա- նօթ են: Ուստի, այդ պարտնիկին իրատ կուտանք որ կրկին այգւսի սոլոյական սպանալիքներով երեսա- կայտ խիզախ յոխորտանքներ չընէ, անուններ հասկնալու և այնպէս չափ- ուելու համար անոնց հետ, որովհե- տեւ ամէն մարդ Սուգիկեանի կարծա- ծը չէ, ինչպէս և քիչ մ'ալ անոր ա- նունի փառքէն չէ բռնուած:

Կրկինք թէ, շատոնց վերջակէս մը գրած ենք Թուականի խնդրին առ- ջեւ, որ բաւական կերպով թէ մեզ և թէ հրապարակը ողողեց անհանդու- ժելի զգուանքով մը, ուստի չ'արժեք աւելի եւս թուղթ մ'ըտել ու փամա- նակ վատնել Ու թող Սուգիկեան գիտցած ըլլայ որ՝ եթէ երբէք Թու- մանանի խնդրը մէջնեղ չըլլար, որ էական հարց մըն է հիմա, չը պիտի զիջանէինք նոյն իսկ տող մը յանձն առնել իրեն համար և այս աննախան- ձելի դերը կատարել, պատուոյ խօսք ընելու և կամ վիճելու համար, քանի որ՝ նոր չէ թէ Սուգիկեանի հետ կը ծանօթանանք: Ուստի, պարտնիկ, խնդրեմ «վաղ» անցէք այդ յիմարա- կան փառասիրութիւններէն, և ուրիշ բանի մը ձեռնարկեցէք:

Մենաւոր

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Նշանաւոր դող ծովային նա- խարարը Հասան փաշա մեռեր է անցնալ շարաթ, հաւանական է որ Հիճազի կառավարիչ Բաշիք փա- շանսոր յաջորդէ:

ՄԱԿԵՂՈՒՆՍ

Կի, Պօլսէն «Թան»-ի կը հեռագ- րեն թէ Սուլթանին նախարար- ները գրեթէ ամէն օր Ռուսիոյ և Աւստրիոյ դեսպաններուն կը հա- ղորդեն այն դժուարութիւնները որոնց կը հանդիպին թուրք պաշ- տօնեաները Մակեդոնիոյ մէջ բա- րենորոգմանց ծրագրին գործա- դրութեան ատեն, ու փոխադար- ձաբար այդ դեսպանները կիմաց- նեն Բ. Գրան Մակեդոնիոյ իրենց հիւպատոսներու ցոյց տուած ծա- նօթութիւնները: Քանի մը շա- բաթէ ի վեր հայդուկային խում- բերու թիւն ու շարժումները աճած են, և կարգ մը երեւոյթ- ներ կը մատնանշեն մօտակայ ընդհանուր ապստամբութիւն մը, նոյն իսկ մակեդոնական ներ- քին կազմակերպութեան ձեռ- քով, որոնց գլուխ կը կանգնին Տօքթ. Թաթարչէֆ Մաթով և ու- ռուն զինուորական ուժին ղեկա վարն է Պօրիս Սարաֆօֆ:

— Սօֆիայի թուրք քոմիսէրը գանգատած է որ պուլկար կառա- վարութիւնը հակառակ իր խոս- տումներուն յեղափոխական քոմի- թէներու դէմ ու է մի'ոնց չի գործադրեր:

— Բ. Գուրը հաղորդած է ուս- տական և աստրիական դեսպան- ներու թէ Սքօբիա նահանգին մէջ 2000 է աւելի զանազան ազգերու պատկանող անձեր հաւաքուել են Սքօբիա երթալու դիտաւորու- թեամբ իրենց գանդատները տէ- րութեանց հաղորդելու համար. բայց թուրք զօրքերը առանց արի-նահանգութեան ցրուել են զանոնք:

— Ալպանացիները չուզելով զինաթափ ըլլալ, յարձակեր են Քօսովայի կուսակալին բնակարա- նը և վիրաւորեր են հաֆիզ Մէհ- մէտ փաշա կուսակալը: Սուլթանը հրաման քրած է Սելանիկ երկու ըմբիշներու որպէսզի զայն խնա- մելու երթան:

— Քրքական աղբիւրները կը հաղորդեն թէ «Նիշիկ» քաղա- քին մօտ 14 հողիէ բազկացած հայդուկային խումբ մը, պուլ- կար սպայի մը առաջնորդու- թեամբ, փորձեր է յարձակիլ «Նիշիկ» զէնքի մթերանոցին վրայ: Զօրքերն ու պաշտպանու- ղները անոնց դէմ գացեր են և 18 ժամ կռիւէ ետքը բոլորն ալ մեռեր են հայդուկները իրենց սպային հետ, որուն անունը չեն կրցած հասկնալ: Ոչ մէկ հայ- դուկ չէ փորձեր փախչել կամ ողջ ձերբակալուիլ:

— Տէմիր Հիսարէն հասնող ճամբորդներ կը պատմեն թէ հայ- դուկային խումբերու և թուրք կանոնաւոր զօրքերու միջև մեծ ընդհարում մը տեղի աւնեցեր է, Յէթ քիւղին մօտ: Ծամբորդները ու է մանրամասնութիւն չեն կր- նար տալ:

ՊՈՒԿԱՐԻՍ

Նախարարական տաղանակը գեռ կը շարունակուի «Բօշթա» թեր- թը կը գրէ թէ իշխանը վերա- հաստատած է Տանէվի նախարա- րութիւնը իր պաշտօնին մէջ գնդակաւ Սափօֆը ժէնէրալ Բար- իրքովին աեղ պատերազմական նախարար նշանակելով:

ՍԵՐՊՈՒ

Պէլկրատէն կը հաղորդեն թէ սերպ կառավարութիւնը հրա- հանգ տուած է առաջին երեք տարուան պահեստի յօրքերուն որ պատրաստ դաւնուին ու է կա- րելի հրամանի մը վրայ անմի- ջապէս հաւաքուելու:

— Պէլկրատէն կը հեռագրեն որ հոն հասած են Աւստրիա յանձ նարարուած 2000 սնտուկ փամ փուշա:

ՌՈՒՍԻՍ

Սիպերիոյ Թոմոք քաղաքին մէջ ուսանողական նոր խումբու- թիւններ ծագած են, որոնց ճշ- գրիտ մանրամասնութիւնները ղեռ կը պակսին: Կը պատմեն թէ ժողովուրդն ալ մասնակցեր է խումբութեանց և կառավա- րութիւնը հարկադրուել է զինու զօրութեամբ կարգը վերահաս- տատել:

Հ Ե Ր Ք Ո Ւ Ս

Ներկայիս կուգամ հրապարակաւ հերքելու այն զրոյցը թէ՛ մենք հն- չակիաններս, եկած ենք ժողովաբ- րակ ուղղակի կուռելու դիտումով, Մենք բողոքեցինք մ'ալ այն սու- տերուն դէմ, որոնք զուրս կը վի- ժէին անորակելի Զիթճեանի բերնէն եւ խնդրեց մեր գործիչը ժողովի ա- տենապետէն որ ինքն ալ խօսի: Երբ լենկիցիներու մէջ «Թող խօսի» եւ «Թող չի խօսի» շղթաւոր բարձրա- ցաւ, իմ վրայ յարձակողներու ա- ռաջիւր եղաւ ծխալաճառ Սիմօն ա- նուն հակադիտակական սինկոր մը, որմէ ուրեմն ծագում առաւ կոռելը: Կէտ մը, որ վրիպած չէ դիտողաչ- քերէ, այն է թէ՛ ունկիցիներու մե- ծամասնութիւնը «Թող խօսի» կը պո- տար:

Ուրեմն կրնանք եզրակացնել թէ ժողովի ատենապետը, իրօք Շէֆքե- ներու մարմնացումն է եղեր որ մեր- ժեց մեր խնդիրը:

Վարդան Սոսիսաւան
Վառնա 17/30 մարտ 1903

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Պ. Վ. Շաւարշ, Վառնա.— Զիթ- ճեանի բանախօսութեան առթիւ ձեր ուղարկած յօդուածը յա- ջորդ թուով կը հրատարակենք: Պ. պ. Յ. Խ. և Յ. Ա. Վառնա.— Զեր նամակները չենք կարող

տպագրել: Զեր յիշած այլ և այլ ոչուգուգաներու և «Շէֆքեան»- րու խնդիրներով զբաղելու հա- մար պէտք չէ որ զոհենք «Շար- ժում»ին չափազանց սուղ էջերը: Եթէ կը փափաքիք անպատճառ հրապարակ հանել զանոնք, կը նաք հրատարակել մասնաւոր թուոցիկ թերթերով:

Կ Ը Փ Ն Տ Ո Ւ Ի Ի

Կարապետ Յարութիւնեան 28- 29 տարեկան շէկ ու երկայն պն- խերով, միջահասակ, Երզնկայի Մահմուտցայ գիւղէն, 1902 դեկ. 8ին Քօնսթանտնուպէն մեկնած դէպի իւր ծննդավայր երթալու, միջ Տրապիզոն հասնելով անկէք անս յայտ կը ըլլայ, վերջերս կը հաս- կցուի որ յետ վերադարձուցած են, իր ազգականների կողմէն կը փնտուրի, տեղեկութիւն ունե- ցողներէ կը խնդրուի որ փութան հաղորդել խմբագրու- թեանս:

ՊԱՏԿԵՂԱԶԱՐԴ ՎԱԶԻՆ.— ԵՐԳՐԱՆ

Բանաստեղծութեանց, ազգա- յին, յեղափոխական, Ժողովր- դական և սիրային երգերու այս ճոխ հաւաքածոն միջնաբերդայ նմանօրինակ հրատարակութեանց ամէնքը կը գերազանցէ:

Բաղկացած է 600 մեծադիր երեսներէ, զարգարուած է ըն- տիր թուղթի վրայ տպուած հայ նշանաւոր դէմքերու գեղեցիկ պատկերներով:

Քանի մը անձերու անհատա- կան ջանքերով Ամբրիկայի մէջ լոյս տեսած այս կարեւոր հրա- տարակութեան ամբողջ հասոյ- թը, յատկացուած է զուտ բա- րեփոխական գործի մը: Կարծէ որ ամէն հայ ունենայ այս գիր- քէն հատ մը իր տան մէջ:

Պուլկարիոյ համար մասնաւոր զեղջ եղած է և կը վաճառուի համամատարաբ աժան գինով, ոսկեպարմ 5 ֆրանկի, Փօստի ծախքը գնողը կը վճարէ:

Կենի փափաքողները կրնան դիմել Կ. Պիոնիէի, ուսուցիչ ի միջիպէ:

Отговорникъ Мурадъ-Ераносянъ

Печатница «Взаимность» Варна